

Христафоръ Кучукъ-Іоаннесовъ, Письмо императора Іоанна Цимисхія къ армянскому царю Ашоту III. (*տես Վերև էջ 90*):

Prof. Vetter, Die armenischen Apostelacten. II. Die Akten der Apostel Petrus und Paulus. Oriens Christianus, Roma 1903. 41 էջ:

В. Райтъ, Краткій Очеркъ Исторіи Сирійской Литературы. Переводъ съ англійскаго К. А. Тураевой, подъ редакціей и съ дополненіями проф. П. К. Коковцова. Съ приложеніемъ обзора коллекціи нитрійскихъ рукописей британскаго музея и спеціальной карты. СПБ. 1903. XIII×294. *Հնժան ու զարկել է աշխատութիւնը խմբագրող պրոֆ. Պ. Կ. Կոկովցեղը*:

Г. Халатянцъ, Армянскіе Аршакиды въ „Исторіи Арменіи“ Моисея Хоренскаго. Опытъ критики источниковъ. Часть I изслѣдованіе, II матеріалы, Москва, 1903. I—XVI+400+143.

—Ueber die armenische Version der Weltchronik des Hippolytus, էջ 5:

—War Artasches von Armenien der Besieger des Krösus? 8 էջ: Vorträge gehalten auf dem XIII intern. Orientalischen Kongresse zu Hamburg, 1902.

А. С. Хасановъ, Древнѣйшіе предѣлы расселенія грузинъ по Малой Азіи, Тифлисъ, 1903 г. 70 էջ: (Записки Кавказскаго отдѣла Импер. Русск. Геогр. Общ. Книжка XXII, выпускъ 6-й).

Գրեթէ վարդապետ



ԱՅՈՒՆՎԱՐ

«Vossische Zeitung» Գերմանական թերթը միջազգային վիճակագրական բիւրոյի տեղեկութիւնները վրայ հիմնուելով առաջ է բերում հետեւեալ վիճակագրական տեղեկութիւնները աշխարհիս բոլոր բնակիչները և աշխարհի առևտրական ընդհանուր շարժման մասին:

Անցեալ 1902 թուին երկրագնդին վրայ ապրող բոլոր մարդկանց թիւը հասնում էր 1,627,770,640 հոգու: Բոլոր աէրու-թիւնները ի միասին առած իրենց երկրի սահմաններից ապրանք են արտահանում դէպի ուրիշ աէրութիւններ 60,755,620,454 ֆրանկի, իսկ դրա փոխարէն ուրիշ աէրութիւններից ապրանք են ներմուծում 50,477,344,120 ֆրանկի: Պետական պարտքերի քանակութիւնը 1793 թ. հասնում էր 12,160 միլիոն ֆրանկի, 1843 թուին այդ գումարը աճում է մինչև 40,005 միլիոն ֆրանկի, 1872-մինչև 112,051 միլիոն ֆր. իսկ 1902 թ. 172,847,611,705 ֆր. Պարտքի գումարի ամենամեծ մասը Եւրոպայի բաժինն է՝ 137,854,637,430 ֆր. Ասիայի բաժինն է՝ 8,309,342,692 ֆր. Աֆրիկայինը՝ 5,476,825,475 ֆր. Ամերիկայինը՝ 14,681,822,250 ֆր. և Աւստրալիայինը՝ 6,544,925,850 ֆր: Աշխարհիս երկաթուղային գծի երկարութիւնը ներկայումս հասել է 831,948 կիլոմետր երկարութեան, որից Եւրոպայի ցանցը հաւասար է 305,402 կիլ., Ասիայինը՝ 51,607 կիլ., Աֆրիկայինը՝ 19,651 կիլ., Ամերիկայինը՝ 418,233 կիլ. և Աւստրալիայում կայ 38,065 կիլոմետր:

Դեմագական ժողովրդական դպրոցներ 1901 թուի վիճակագրական պաշտօնական տեղեկութեան հիման վրայ՝ հետեւեալ պատկերն են ունեցել: Բոլոր դպրոցներում 1901 թուին սովորել են 8,823,812 երկոտու մանուկներ. ուսուցիչների թիւը հասել է 122,145 հոգու, ուսուցչուհիներինը՝ 22,339, հետեւապէս ամեն մի ուսուցիչ միջին հաշուով ուսուցել է 61 աշակերտի: Որքան քիչ աշակերտ ամեն մի ուսուցչի, այնքան բնականաբար բարեյաջող է ուսուցման պայմանը և ըստ այդմ առաջի տեղը բռնել է Նիւբեկ քաղաքը՝ ուր ընկել է մի ուսուցչի 34 աշակերտ, ապա Համբուրգը 38 աշակերտ, Բրեմէն և Բերլինը 47. մի քանի տեղերում աշակերտների թիւը հասնում է 50—67 և ուրիշ տեղերում մինչև անգամ 73—99 հոգու: Տարեկան ծաղքը եղել է 415 միլիոն մարկ. ամեն մի աշակերտի վրայ՝ 47 մարկ կամ 24 ռուբլի: Հարկաւ, որքան քիչ է ուսուցչի աշակերտների թիւը, այնքան ամեն մի աշակերտի վրայ եղած ծախքը շատ է. օր. Բերլինում հասնում է 95 մարկի, Բրեմենում — 77, Համբուրգում 74. կան տեղեր, որ 40 մարկից էլ պակաս է լինում: Ծախսուած գումարի զլխաւոր ծանրութիւնը ընկնում է համայնքի վրայ, պետական դանձարանը համետաբար քիչ է ծախսում. օրինակ՝ Պրուսիան ծախսել է 270 միլիոն մարկ և դրանից պետական դանձարանը տղել է միայն 37 միլիոն:

Ուշադրութեան են առնուած դպրոցական շէնքերը, որ

միջաւ մասամբ պաշտօնները տալու որով թիւն են թողնում. լայն, ընդարձակ, լուսատու, ունին խաղալու բակ, բաղանիք, երբեմն պարտէզ: Եւ ինչ կասկած, որ այդ հանգամանքը զատակարար-կուող մասնազ սերնդի համար խիստ կարեւոր է:

Շվեյցարիացի Համան պրոֆեսորը նորերս հրատարակել է մի ըրոշիւր, որի մէջ հաշուել է աշխարհումս ցրուած հրէաների թիւը: Նրա ասելով հրէաների թիւը հասնում է 10,000,000-ի որից 5¼ ապրում է Եւրոպայում. Ռուսաստանում 5,500,000, Աւստրո-Ունգարիայում 1,860,000, Գերմանիայում 568,000, Ռումինիայում 300,000, Անգլիայում 200,000, Միացեալ-Նահանգներում 1,000,000, Ասիայում 250,000, Աֆրիկայում 270,000, Ավստրալիայում 17,000: Այս ցուցակը կատարեալ չէ, որովհետեւ չեն յիշուած Ֆրանսիա, Իտալիա, Սպանիա ևն:

Համանի վիճակագրութիւնից երևում է, որ XIX դարում մօտ 200,000 հրէայ ընդունել են քրիստոնէութիւն:

